

# ԹՈՒՄԱՆԵԱՆ-ԽՐԱԽՈՒՆԻ.

## «ՄԱՅՐ ԳԾԻ» ՀՈԼՈՎՈՅԹՈՒՄ

ՔՆԱՐԻԿ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ  
k.abrahamian@spyurk-center.am

Պոլսահայ նորագոյն բանաստեղծութիւնը, որ հրապարակ իջաւ երկրորդ Աշխարհամարտի աւարտից յետոյ, իր բնագծերով կարծես առանձնանում էր հայ գրականութեան պատմութեան աւանդական ուղուց եւ առաջին հայեացքից դժուարհամեմատելի էր նախորդած արեւմտահայ, առաւել եւս՝ արեւելահայ գրականութեան ընթացքների հետ:

Եւրոպական նորագոյն գրական հոսանքներից, յատկապէս Փրանսիականից (Պոլ Էլիւար (1895-1952), Անդրէ Բրետոն (1896-1966), Ժաք Փրեւէր (1900-1977) ազդուած եւ քերթողութեան աւանդական ճանապարհից նկատելի շեղումներ ունեցող այս ուղին, չնայած բանաստեղծական ձեւի նորարարութեան, պարզ, անպաճոյն պատկերներով տպաւորելու միտումի, արտառոց թուացող, «անբանաստեղծական» առարկաների նախապատուութեան, խորքին մէջ մաս էր կազմում հայ գրականութեան պատմութեան, աւելին՝ հանդէս էր գալիս իրեւ արեւմտահայ շքեղ գրականութեան անմիջական ժառանգորդ: Այդ համոզման գալիս ենք, երբ փորձ ենք անում տեսնել այն աղերսները, որոնք գոյութիւն ունեն տարրեր շրջանների գրողների ստեղծագործական շերտերում:

«Առարկայական խորհրդանշապաշտութիւն» (objective symbolism) բնորոշումը ստացած պոլսահայ նոր բանաստեղծական դպրոցի առաջնորդ Զարեհ Խրախունին (Արթօ Ճիւմպիւչեան, ծն. 1926), ում ստեղծագործութեան տեսաբանական ակունքները պէտք է փնտռել ի. դարի Փրանսիացի փիլիսոփայ Անրի Բերդսոնի (1859-1941) յայտնատեսութեան (intuition) մէջ, գտնում է, որ արդի քերթողութիւնը անպայմանօրէն ապահովում է արեւմտահայ գրականութեան «մայր գծ»ի շարունակականութիւնը, քանի որ «Վարուժանի անանձնականութիւնը, թէթեանի անսերեւեր լեզուն եւ ըսելու պարզ ու յստակ կերպը, եւ Զարիֆեանի խորիրդանշանները, միաձուլուելով եւ կրելով անխուսափելի ազդեցութիւնը միջազգային քերթողութեան հոսանքներուն, անհրաժշտորէն պիտի յանգելին ներ այսօրուան ուղղութեան»<sup>1</sup>: Այսինքն՝ այդ արուեստը նոր հագուստի մէջ պահում էր արեւմտահայ դասական բանաստեղծութիւնից եկող «մայր գիծ»ը: Աւելին, իր շարժման աղբիւրը համաշխարհային հարթութիւններում տեսնելուց զատ՝ Խրախունին այն կապում էր նաեւ արեւելահայ բանաստեղծներից եկող աւանդների հետ՝ «Բացառուած չեն նաեւ արեւելահայերը՝ Յովհաննէս Թուման-

եան, Աւետիք Խսահակեան, Վահան Տերեան եւ մանաւանդ Եղիշէ Չարենց՝ իր Էպիքական քերթողութեամբ եւ արդիապաշտ ճգումներով, որոնք կ'առաջնորդէին բանաստեղծութիւնը դեպի 20րդ դարու բարախուն կեանքը եւ հրատապ իրողութիւնները»<sup>2</sup>:

Սակայն գրականութեան պատմութեան միասնական ընկալումը դժուարութեամբ է ճանապարհ հարթում արեւելահայ շրջանակներում<sup>3</sup>: Յովհաննէս Թումանեանը, դեռեւս 1919ին «Հայ գրականութեան վիճակ»ի մէջ պարզաբանումներ մտցնելով, գտնում էր, որ իր էռութեամբ այն «մեծ մասով զաղութային գրականութիւն է եղել: Բանաստեղծի ուոր հարազատ ու իրական հոդի վրայ պիտի լինի, նրանից յետոյ միայն կարող է բարձրանալ, թէկուզ զլուխը երկինք հասնի»<sup>4</sup>:

Չնայած գրական ենթահողի, ազգայինի ճանաչողութեան առումով Թումանեանը երկու մշակութային համակարգերի միջեւ գծում էր «բնաշխարհիկ»ի եւ «տարաշխարհիկ»ի սահմանները, Միամանթոյի առթիւ ասուած խօսքերի մէջ ապագայի դիրքերից որսում էր արեւմտահայ միւս գրողների հմայքը եւս. «... Այժմ մեր առջեւ կը բացուի ազգային հարստութեան մի նոր զանձարան, մեր ոյնաց կը յառնեն մեզ ծանօթ, բայց աւելի շատ՝ անձանօթ տաղանդաւոր գրողների դէմքեր, եւ մենք աւելի հարուստ, աւելի ուժեղ ու աւելի հպարտ կը զգանք մեզ»<sup>5</sup>:

Առաջին հայեացքից դժուար է որսալ այն առնչութիւնները, որոնք գոյութիւն ունեն Թումանեան-արեւմտահայ բանաստեղծութիւն գծի վրայ. չէ<sup>6</sup> որ ազգային գրականութեան ըմբռնումներում Թումանեանը հայկականութեան ամէնից խոր կնիք ունեցող բանաստեղծն է, իսկ արեւմտահայ, այս պարագայում՝ պոլսահայ գրականութիւնը «քիչ նը դասական ձեւերէ հեռու»<sup>7</sup> պատկեր է պարզում:

Թումանեան - Խրախունի բանաստեղծական երկխօսութիւնը կայանում է մի քանի ուղղութիւններով՝ սկսած պոլսահայ բանաստեղծի՝ Թումանեանի զուտ ստեղծագործական աշխարհի հանդէպ ցուցաբերած հետաքրքրութիւնից, մարդկային կեցութեան որոնումներից, ազգային հարցադրումներին ընդհանրական մօտեցումներից, մինչեւ՝ փիլիսոփայական յածումներ եւ տեսաբանական դինանոց:

1969ին Պոլսոյ Պատրիարքարանը Խրախունու խմբագրութեամբ եւ մեկնութիւններով լոյս ընծայեց Թումանեանի Յուշամատեանը: Նոյն տարիներին բանաստեղծի վերածումներով արեւմտահայերէնով հրապարակ իջան Լուեցու հեքիաթները՝ «Գիբորը», «Փարւանան», «Քաջնազար»ը, «Մի Կաթիլ Մեղր»ը եւն.՝ Ընդգծենք, որ տասնամեակներ անց՝ 2008ին, Հայէպի «Կիլիկիա» Հրատարակչատունը տպագրեց Յովհաննէս Թումանեան. 12 Հեքիաթներ շքեղ հաւաքածոն, որում տեղ գտած ստեղծագործութիւնների գրեթէ կէսը Խրախունին վերածել է վերջին երկու-երեք տարիներին: Սա նշանակում է, որ Թումանեանի

աշխարհը կայուն նախասիրութիւն է պոլսահայ քերթողի համար, նաև՝ այսօր:

Ինչ վերաբերում է երկու հեղինակների գեղարուեստական շերտերի ընդհանուր եզրերին, առաջին հայեացքից դժուար է դրանք համադրել: Սակայն Խրախունու ստեղծագործական աշխարհին հետամուտ ընթերցողը համոզւում է, որ բացի գոյութիւն ունեցող ազդեցութիւնների որոշակի շրջանակից՝ առկայ է նաև ստեղծագործական հոգեկցութիւն եւ երկխօսութիւն, ինչը գալիս է փաստելու, որ թումանեանական գրականութեան «Հմայքը» պահպանում է մինչ այսօր: Եւ բոլորովին չպէտք է մտածել, որ ասուածը անհաւասարութիւն է ենթադրում հեղինակների միջեւ՝ մէկին միւսի համեմատ դնում ենթակայ վիճակների մէջ, դարձնում զուտ հետեւորդ:

Նման թիւրըմբոնման «Վտանգաւորութեան» մասին դեռ Թումանեանն էր զգուշացնում իր «Խօսք Սկսնակ Բանաստեղծներին» յօդուածում, թէ՝ «Մի շփոքուք... են ժամանակ, երբ ազդեցութիւնների խօսք են ասում: Համաշխարհային գրականութեան մէջ ոչ մի բանաստեղծ չկայ, որ շատ կամ քիչ ազդուած չինի իր նախորդներից: Ազդեցութիւնը են սանդուղքն է, որով սկսնակը բարձրանում է դեպի ինքնուրունութիւնը»<sup>7</sup>:

Թումանեան-Խրախունի գրական առնչութիւնները ուղղակի ազդեցութիւնների շրջանակով չեն սահմանափակվում. շատ դէպքերում առաջինի առաջադրած այս կամ այն գաղափարը պոլսահայ քերթողի համար նոր մտքերի աղբիւր է դառնում՝ ապահովելով բանաստեղծների տարբեր սերունդների երկխօսութիւնը: Բնորոշ օրինակ է «Հին Օրհնութիւն» եւ «Օրհաս» բանաստեղծութիւնների զուգադիր քննութիւնը:

Այսպէս, գիտատեխնիկական առաջընթացն ու դրա հետ կապուած մարդկային անմիջականութեան կորուստն արձանագրում է նոր փաստ. թէպէտ մարդիկ շարունակելու են ծնունդ տալ իրենց նմաններին եւ հերթապահ խօսքի նման կրկնել պապենական ասոյթը, սակայն նրանց չի լրում այն խմաստուն միտքը, թէ՝

«երեկ լաւ էր բանց փուր էսօր»<sup>8</sup>.

Մարդիկ պիտի շարունակեն ծնունդ տալ իրենց նման որիշներու որովիեսեն ընելիք ուրիշ բան չունին

Առանց մոռնալու մաղքել որ ապրին բայց ոչ իրենց պէտ թէպէտ զիտեն, թէ անոնք իրենց շափ ալ բախտ պիտի շոնենան երբեք

Որովիեսեն արդէն իրենք արտօնուած չեն պառկելու տեղի չգոյութեան պատճառաւ...<sup>9</sup>:

Սակայն միանշանակ չենք կարող հաստատել, որ թումանեանական «Հին Օրհնութիւն»ը բխում է երջանկութեան ըմբռնումից: Եւ եթէ լա-

ւատեսական բնոյթ ունի, փոքր-ինչ պայծառ գոյներ՝ համեմատած հեղինակին այնքան բնորոշ համատարած ցաւի գիտակցութեան հետ, «ապա դա էլ (այդ վայրկենական ընդհատումն էլ) ունի իր բառեղին արտայատութիւնը, որ տեղատրում է մեկ տողում»<sup>10</sup>.

.....«Ապրեք, երեխեք

Բայց մեզ պէս չապրեք»<sup>11</sup>:

Դարերից եկող լաւատեսութիւնը, որ կայ Թումանեանի երկերում, նոր օրերում փոխարինուել է «օրհաս»ի գիտակցումով:

Տարիներ յետոյ, սակայն, 1915ին՝ հայ ժողովրդի համար ծանրագոյն օրերին, ամենայն հայոց բանաստեղծը իր փիլիսոփայական «բարձրից» պիտի քննէր մարդկային թշուառութիւնը եւ գար այն եզրակացութեան, որ՝

.....ուսում են ամենը ամենըին,

Ամեն հայրենիք՝ իրեն զաւակին,

Եւ իր պաշտողին՝ ամեն մի աստուած,

Եւ կեանքը տանջանք, ցաւ համատարած<sup>12</sup>:

«Խորիրածութիւնները, - ինչպէս իրաւացիօրէն այս բանաստեղծութեան առթիւ նշում է գրականագէտ Հրանդ Թամրազեանը, - վերաճում են ուրոյն կենսափիլիսոփայութեան, ներքնապէս առնչուելով ազգային ու համաշխարհային երեսյթներին, խոր ազդեցութիւն քողնելով ընդհանրապէս հայ նորագոյն բանաստեղծութեան վրայ»<sup>13</sup>: Արանք միայն սոցիալական հարցադրումների շարք չենք նկատում, այլ կենսափիլիսոփայական մօտեցման արտայայտութիւն: Խորհրդածութիւնները զարգացում են գտնում նաեւ Խրախունու ստեղծագործութեան մէջ՝ արձանագրելով «տիտոր» փաստ. այլեւ ջնջուած են «մեծի» ու «փոքրի» միջեւ տարբերութիւնները մարդու եւ մարդկայինի սահմանում, որովհետեւ՝

.....ամեն էակ սահման մըն է

արգելք մըն է վտանգ մըն է

հազարաւոր ուրիշներու որոնք նոյնն են իրեն համար

Եւ թէ ինչպէս ամեն գոյութիւն իր գոյութիւնը պահելու

յաւերժական բնագրով

կը դաւէ միւս գոյութիւններուն...<sup>14</sup>:

\*

Ազգային նիւթի խորքային ճանաչողութեանն անդրադառնայիս հայ բանաստեղծները յաճախ են դիմել սրբազան լերան՝ Արարատի «մշտահմայ» օգնութեանը: Դրա չնորհիւ այն դարձել է հայ բանաստեղծութեան ազգային կայուն խորհրդանիլը: Միաժամանակ՝ Արարատի խորհուրդը եղել է գայթակղութեան աննուած քար շատերի համար: Այս մտայնութիւնը, սակայն, նեղացնում է արուեստի ընկալչութեան սահմանները: Հազիւ կարելի է օտարներին տպաւորել «սրտխօսիկ»

պատկերներով: Օրինակը սփյուռքահայ գրականութեան մէջ տալիս է Աւետիս Ալիքսանեանը, ում՝ «Անունը Մասիս Դրինք» պատմուածքի հերոս Ատոմը, ազգայինին իր փարուածութիւնը շեշտերու բնաբուխ ցանկութեամբ, նորածին որդուն կնքում է Մասիս անունով՝ յարուցելով ֆրանսիացիների զարմանքը. «Օլա՞ լա՞... սա շովիններուն նայեցէք... նոր իմացայ, որ լնոներու անունով կարելի է կոչել մարդիկը»<sup>15</sup>: Ժամանակին նման մօտեցումների դէմ բողոքում էր նաև հայրենի գրականագէտ Սուրէն Աղարարեանը. «Յիշենք, թէ քանի հայ քանաստեղծ է զրել նայիրեան քարտու, հայոց փշատենու, հայոց քարերի..., հայոց պատմութեան հերոսական անունների մասին եւ յիշենք, թէ այդ անհամար քանակից քանի քանաստեղծութիւն է մնացել անքողիաներուն ու քրեստոնատիաներում»<sup>16</sup>:

Միաժամանակ պէտք է ընդգծել, որ հայ լաւագոյն քանաստեղծները՝ Թումանեան, Չարենց, Սիլվա Կապուտիկեան, Ցովհաննէս Շիրազ եւն-, քերթողական վարպետութեան շնորհիւ կարողացել են տալ քանաստեղծական լաւագոյն նմուշներ՝ կարծես այլեւս բացառելով մրցակցութեան որեւէ հնարաւորութիւն: Ինչ մնում է ամենայն հայոց քանաստեղծին, լեռների հանդէպ ունեցած գեղարուեստական նախասիրութիւնը դարձել է ստեղծագործական յատկանիշներից մէկը, թէեւ անգամ նրա պարագայում նիւթը վիճայարոց է եղել, այն աստիճան, որ Վահան Տէրեանը իր պարտքն է համարել քանաստեղծին պաշտպանել ժամանակի քննադատութեան սլաքներից, «...որ Յովի. Ծումաննեանին «Լերան երգի» զարմանալի անունն է տուել»<sup>17</sup>: Խօսքը Լէոյի մասին է, որ այս արտայայտութեամբ փորձում էր դրսեւորել իր ոչ-այնքան քարեհան վերաբերմունքը Թումանեանի ստեղծագործութեան նկատմամբ:

Իր երկու պոէմներից առաջինի՝ «Հառաչանք»ի նախերգանքը («Լեռներ՝ ներշնչուած դարձեալ ձեզանով...») հեղինակը յանախ է առանձնացրել իրեւ «սիրուն կտոր» եւ տպագրել իրեւ ինքնուրոյն քանաստեղծութիւն, իսկ «Հայոց Լեռներում» քանաստեղծութեամբ ձեռք է գարկում իր փայփայած ամէնից կարեւոր ստեղծագործական շահագրգութեանը՝ արեւմտահայութեան պայքարին նուիրուած անաւարտ «Հին Կոխւր» պոէմին. «Մի մեծ ազգային պունա եմ ծեւուն, մի քան, որ վաղուց ներս փորորկում եր քառային դրութեան մէջ, եւ հոգի աստծոյ շրջէր ի վերայ նորա - եւ անշոշտ մի օր ասելու է եղիցի լոյս»<sup>18</sup>:

Թուում է՝ Թումանեանից յետոյ այլեւս անհնար է նոր խօսք ասել. Մակայն Խրախունու՝ ազգային նիւթի հանդէպ չափաւոր մօտեցման պահանջն ու «նուիրականացած ազգային, կրօնական եւ պատմական ըմբռնումների ու խորիրդանշանների»<sup>19</sup> հանդէպ ունեցած մեծ պատասխանատուութիւնը գալիս են ապացուցելու, որ նա չի նախընտրում

«ընթանալ լաւ սալարկուած միեւնոյն լայն փողոցով»<sup>20</sup>. Նա լեռներգութեան մէջ բարձունք նուաճած բանաստեղծն է:

«Հառաչանք»ի նախերգանքում Թումանեանը, ի հարկէ, ներշնչում էր հայրենի լեռների մեծութիւնից. այդուհանդերձ ազգային կեանքում տիրող հակասութիւնների պատճառով յաւելում էր նաև նրանց եւ մարդկանց կեցութեան միջեւ եղած «անհաւասարակշութիւնը».

Լեռնե՞ր, ներշնչուած դարձեալ ձեզանով,  
Թղնդում է հոգիս աշխուժով լրցուած,  
Ու ջերմ լղձերս, բախտից հալածուած,  
Զեզ մօտ են գալիս յախուոն երամով<sup>21</sup>:

Խրախունու՝ պոէմի ժամանիշերին միտող «Լեռն ի Վեր» քերթուածում էլ, ինչպէս Թումանեանի մօտ, հակադիր ծայրաբեւեռներում են գտնուում մարդն ու լեռը: Լեռն իր հնօրեայ վեհութեամբ ու անպարտելի կեցուածքով մեզնից անընդհատ նուաճումի քայլեր է պահանջում, իսկ մենք, ազգային սովորութեան համաձայն, միշտ յապաղում ենք մեր քայլերի մէջ.

ԱՅ կ'ուզէ որ  
Միշտ դարպասեն իրեն շուրջ

Մինչդեռ մենք  
Կը յօրանջենք լեռն ի վեր<sup>22</sup>:

Արեւելահայ բանաստեղծից Խրախունուն փոխանցւում է ստեղծագործելու էպիք եղանակը՝ «նոյնիսկ ամենալարուած ու ողբերգական իրադրութեան մասին պատմել արտաքնապէս հանգիստ, առանց զգացմունքի եւ վերաբերմունքի ճշգող շեշտերի, բողնելով, որ այդ վերաբերմունքն արտայայտուի դէպերի օրեկտի ընթացքի մէջ»<sup>23</sup>:

Հինգ տներից բաղկացած «Հայոց Լեռներում» բանաստեղծութեան մէջ հեղինակը ուրուագծում էր հայ ժողովրդի հաւաքական պատմութեան դժուարին ընթացքները: Ինչպէս գրականագէտ Սեւակ Արզումանեանն է նկատել, բանաստեղծը հայ ազգային ուղին «համայնապատկերային կտակի թանձրութեան է հասցրել»՝ «կերտելով հայ ժողովրդի կամքի, մաքառումների եւ օրիասական պատմութեան բանաստեղծական դիմանկարը»<sup>24</sup>: Թաքնուած պատկերներով ու թուրքական միջավայրի առթած զգուշութեան պայմաններում, սահելով դէպի խորհրդանիշների «փրկարար գիրկը» եւ ապաւինելով «անոնց բազմիմաստութեան»<sup>25</sup>, պատմութեան դրուագներ է վերակերտում պոլսահայ բանաստեղծը: Երկու հեղինակների մօտ էլ լեռները պատմութեան ու ժողովրդի բնաւորութեան յատկանիշների խտացումն են, հայի ընդհանրական տառապանքի ու ցաւի վկայութիւնը: Միեւնոյն ժամանակ երկու

ստեղծագործութիւնների մէջ էլ ընդգծւում են վերելքի տրամադրութիւնները, լեռներն իրենցով պայմանաւորում են ապագայի լուսաւոր տեսլականը՝ բարձունքը նուաճելու ձգտումը՝ մի դէպքում «պայծառ առաւօտ»ի<sup>26</sup> («Հայոց Լեռներում») խորհրդով, երկրորդ պարագային՝ «անմահութեան սանդուխ»ին<sup>27</sup> («Լեռն ի Վեր») հասու լինելու «երկիւղած» քայլերով:

Լերան կերպարի քննութիւնը մենք կառուցում ենք ոչ միայն ազգայինի, պատմութեան իմաստաւորման զուգահեռների, այլև նոյն լերան անձնաւորման ճանապարհով: Այստեղ զուտ պատկերային կառուցով լեռը մեր առջեւ բացւում է «ծերունու քնահանոյքներով», «մին մքնում, մոայլում, մին բացում ու ժպում [է], բայց միշտ սիրուն, միշտ խորհրդաւոր...»<sup>28</sup>, - ինչպէս նշում է Թումանեանը նամակներից մէկում<sup>29</sup>:

Նման նկարագրական ճանապարհ տեսնում ենք նաեւ Խրախունու քերթուածի մէջ<sup>30</sup> («...անկեալ աստուած մըն է հնօրեայ», «...նախկին ոշխոյ մըն է ծերացած», որն ունի ի՞ր քմահանոյքները).

Հոգին կ'ուզէ - մահիկն իրեւ ծամակալ

ծինասպիտակ իր մազերուն կ'անցընէ

Հոգին կ'ուզէ - կ'առնէ արեւն իրեւ քազ  
հերատ զիսուն կը դնէ...<sup>31</sup>

Չնայած երկու հեղինակների միջեւ եղած աշխարհընկալման տարբերութիւններին, որոնք Թումանեանի պարագային յենուում էին ժողովրդական կենսափիլսոփայութեան տարերային ակունքների վրայ, իսկ Խրախունու մօտ երեւան գալիս փիլսոփայական համակարգուած գիտելիքներից, ինչպէս գրականագէտ Սուրէն Դանիէլեանն է ընդգծում. «Ազգային խորհուրդների գեղարդուաստական բացայայտման տեսակետից... այս բանաստեղծութիւնն («Լեռն ի Վեր» - Ք.Ա.) ուղակիօրէն շարունակում է թումանեանական աւանդոյթը»<sup>32</sup>:

\*

1915ը ճակատագրական կնիք թողեց ոչ միայն հայ ժողովրդի կենսագրութեան, այլև մշակութային դիմագծի վրայ: Բաւական է ասել, որ արեւմտահայ գրական աշխարհի համար այն սահմանաբաժան դեր կատարեց՝ իրենով պայմանաւորելով արեւմտահայ եւ սփիւռքահայ շրջափուլերը: Անգամ օտարագիր գրականութեան մէջ դժուար է առանձնացնել որեւէ հեղինակի, որի ստեղծագործական հետաքրքրութիւնների ձեւաւորման վրայ նկատելի լինի ողբերգական դարակագմիկ իրագարձութիւնը:

Նիւթին դիմելը, ի հարկէ, դեռ չի նշանակում, թէ դա կարող էր խթանել բարձրարժէք ստեղծագործութիւնների երեւան գալուն: Բանն այն է, որ այդ պատմական իրողութիւնը այսօր էլ դժուարամարս է գեղարուեստական հարթութեան մէջ. շատ դէպքերում վերաճում է զուտ

նկարագրութիւնների աղբիւրի, տեղ բացում ազգային նուիրական անունների անհարկի շահարկումի:

Բնական է, որ Թումանեանը չէր կարող անտարբեր մնալ. մանաւանդ նրա գործունէութիւնը այդ ժամանակահատուածում մեծապէս կապւում էր արեւմտահայ ճակատագրի հետ<sup>33</sup>: Երկու անգամ (Վանում եւ Ալաշկերտում) ժողովրդական զանգուածների հետ անմիջական շփումներ ունենալով՝ համազգային սարսափներին ականատես բանաստեղծը տպաւորուած խոստովանում է, որ մինչ այդ բաւարար ճանաչողութիւն չի ունեցել «կենդանի Հայաստանի» մասին. «Ես ինչքան թիշտեղեկութիւն եմ ունեցել Խօրուայ կենդանի Հայաստանից, ես, որ համարում եմ նրան ճանաչողներից մինը, ես, որ միշտ կարծիք եմ յայտնել ու շատ թէ թիշտեղեկութիւն նրա համար...»<sup>34</sup>:

Բանաստեղծը «Հոգեհանգիստ» է կարդում «անբախտ» գոհերին՝ անդաստանի եկեղեցական ծէսի նման, երբ քահանաները աշխարհի չորս կողմը խնկարկութեամբ խաղաղութիւն, առատութիւն ու անսասանութիւն են մաղթում երկրին: «Թուում է այս պատկերացումից է եկել Ժումանեանը, գրելով իր ցնցող «Հոգեհանգիստ»ը՝ հայ ժողովրդի մեծ սուզի օրերին... եւ ո՞վ է անկեղծ վշտի պահին ընկնում սուտ պարոսի մեջ, ինչպէս անում են վշտի երգիշ համարուող եւ եղերամայրերի նմանող կեղծ պուտները»<sup>35</sup>, գրում է արձակագիր Ստեփան Զօրեանը:

Տասնամենակներ անց, արդէն արեւմտահայ երրեմնի մշակութային մայրաքաղաքից հնչում է Խրախունու ձայնը, ով հենց եկեղեցական «պատկերացումից է ելել»՝ գրելով իր «Հոգեհանգիստ»ը (1972): Այն մաս է կազմում 1973ին լոյս տեսած Տօնակարգ ժողովածուի, որտեղ եկեղեցական արարողութիւնների շնորհիւ բանաստեղծը պարզում է հայ ազգային դիմագծի մի շարք կողմեր:

Եւ երկու բանաստեղծներն էլ երկար, հանդարտ տողերի ընթացքով մեր առջեւ բացում են եղերական օրերի պատկերը: Թումանեանի մօտ փաստերը ներկայանում են առարկայական ճշգրտութեամբ՝ անգամ տեղանունների յիշատակումով, հայրենի լեռների վկայակոչումով:

Ու վեր կացայ ես, որ մեր հայրենի օրէնքովը իին՝

Վերջին հանգիստը կարդամ իմ ազգի անբախտ զոհերին...

Մինչեւ Միջագետք, մինչեւ Ասորիք, մինչեւ Ծովն Հայոց,

Մինչեւ Հելլեսպոնտ, մինչեւ Պոնտոսի ափերն ալեկոծ...<sup>36</sup>:

Մինչեռ ընթերցողը Խրախունու քերթուածում երեւոյթների ճանաչողութիւնը որսում է այլաբանական բառերի ենթախորքում, բանաստեղծական պատկերի վերացարկումի շնորհիւ, ինչպէս ինքն է առւմ՝ «անուղղակի միջոցներով միայն տպաւորել»ու<sup>37</sup> ճամբով: Թաքնախօսութիւնը իբրև բանաստեղծութեան նոր ու նախընտրելի որակ

գիտող Խրախունին այդպէս է վարւում նաեւ, ինչպէս վերեւում նշեցինք, թրքական միջավայրի գործօնից ելներով։ Այո՛, ժողովրդի երազանքը փշրուած է, եւ ցեղասպանութեան կազմախօսութիւնն ակնբախ է։ Եթէ վեր քաշենք շղարշները, կը տեսնենք ազգային ողբերգութեան սահմուկեցուցիչ հատուածներ։

Հոգեհանգիստ բոլոր անոնց որ զերեզման շունեցան –  
Անդորրութի՛ւն խոպաններուն, ճահիճներուն ու զետերուն  
ջուրերուն

ճամբաններուն անվերադարձ որ ոչ մէկ տնի կը տանին  
Ու կը խրին փոշիներու լուրեան մէջ անպատում...<sup>38</sup>.

Բանաստեղծը գտնում է, որ նահատակութիւնը ինքնին «պարապ տեղն» էր։ Կայ արդարացի դժգոհութիւնը նաեւ ազգային քաղաքական խեղճութիւնից Ճանաչելի է եւ Հայի «մեղքի բաժինը»։ Տարիների հեռաւորութիւնը, զգացական տարրի գերիշխանութեան մերժումը պոլսահայ բանաստեղծին թոյլ են տալիս սթափ լինել գնահատութիւնների հարցում։

Խաղաղութի՛ւն խոռվեններուն, ափսոսանքին, զշումներուն,  
զայրոյթին...<sup>39</sup>։

Խորհրդանիշների հմուտ խաղարկումը բանաստեղծական իմաստներին չերքին շերտերում գիւտի արժէք է ստանում. ամէն մարդ էլ կարող է երազներ ունենալ եւ դրանք տապալուած տեսնել, այնքան ընդհանրական եւ մարդուն մասնայատուկ է պատկերը։

Հանգի ստ բոլոր արլորներուն որ երգեցին շատ կանուխէն եւ  
այզարաց շտեսան...<sup>40</sup>։

Ովքե՞ր են «չատ կանուխէն երգած» աքլորները. մեր բանաստեղծները<sup>41</sup>, որոնք հապճեպօրէն անսացին նախ Օսմաննեան Սահմանադրութեան, ապա Առաջին Համաշխարհային Պատերազմի առերեւոյթ առթած յոյսերին ու «նոր արշալոյսին»։ Պատկերային կառոյցը մեզ անմիջապէս տանում է դէպի թումանեանի ծրագրային մէկ այլ քերթուածի՝ 1902ին գրուած «Մեր Նախորդներին»ի պատկերներին, երբ տասնամեակի հեռաւորութիւնից բանաստեղծն արդէն կանխատեսում էր տագնապալի իրադարձութիւնները։ Նա ափսոսանքով է լիշում «մեր նախորդների»՝ Ղեւոնդ Ալիշանի, Ռափայէլ Պատկանեանի, Բաֆֆու ժամանակները, որոնք յուսավառ էին ազգային արթնութեան հարցում։

Երանի եր ձեզ, գովուած երգիշներ,  
Դուք երգում էիք վաղ առաւտեան,  
Երբոր երազներն ապրում էին դեռ,  
Ուկի երազներն հայի փորկութեան հարցում<sup>42</sup>։

Ճակատագիրը նոր սերնդին նոր փորձութիւններ է պարզելու. բանաստեղծին չեն փրկում քնարի լարերը, այսինքն՝ այլեւս «տեղ չի

մնում» գեղարուեստի համար, նոյնիսկ Աստուած հաւատ չի ներշնչում («Ընկնում են սլրտից ե՛ւ երգ, ե՛ւ Աստուած»<sup>43</sup>):

Պոլսահայ բանաստեղծը, սակայն, «դարաւոր ըղձանքով» է փարւում հայութեան լաւագոյն հեռանկարին. չնայած վաղորդայն չունեցող առաւտոների թաւալումին՝ «Հոգեհանգիստ»ը մեր փոթորկուած հոգուն չնորհում է մի իւրատեսակ անդորրութիւն:

Խաչահանգի՝ ստ այս ցաւերու ծովուն վրայ ուր մեր նաւն է կտաւ պարզեր անտրտում...<sup>44</sup>:

Ի դէպ, «խաչահանգիստ» բառը ժամանակին գործածել է թումանեանը: Երկու հեղինակների բնագրերում այն հանդէս է գալիս տարբեր խօսքիմաստային արժէքներով, բայց նոյն գաղափարական յանձնառութեամբ: Ընդհանուրն այստեղ ազգայինի փնտուտուքն է. մի դէպքում «խաչահանգիստ»ը հայկական հովիտների յատկանիշն է (ածականական կիրառութեամբ), որի մէջ բանաստեղծի համար թաքնուած է հայի ողին<sup>45</sup>, միւս պարագային՝ «ցաւերու ծովուն վրայ» խաղաղ նաւահանգիստ հասնելու ցանկութիւնը (գոյականական կիրառութեամբ):

Իսկ ո՞րն է Խրախունու «Հոգեհանգիստ» բանաստեղծութեան առաւելութիւնը, հիմնական այն յատկանիշը, որով նա առանձնանում է թումանեանի համանուն քերթուածի հետ «մրցակցութեան ելած» այլ գեղարուեստական երկերից: Կարծում ենք, նախ՝ ասելիքի ձեւը: Թումանեանական ձեւակերպումը՝ կապուած ձեւի եւ բովանդակութեան յարաբերակցութեան հետ, օգնում է մեզ երկու նժարները «քով քովի» բերել: «Ես, որ աստուածացնում եմ Ծերսպիրին, իսկի չեմ ել մտածում, թէ նա ինչ միտք է յայտնել... այլ թէ ինչպէս է յայտնել»<sup>46</sup>: «Ծերսպիրից առաջ են յայտնած բոլոր այն նորերը, որ նա իր հանճարի ֆոկուսի միջով ցոյց է տալիս աշխարհին: Այս է մրցութեան դաշտը...»<sup>47</sup>:

Խրախունու ստեղծագործական համակարգում գաղափարը տեղ հասցնելու փնտուած միջոցը՝ ձեւը, «առարկաների խորհրդանիշներն» են: Նման հարուստ խաղարկումի հեղինակը գնում է ոչ-այնքան միջավայրի գործոնի, որքան Փրանսիական բանաստեղծական նորագոյն հոսանքների թելադրութեամբ, կամքի եւ ազատութեան փիլիսոփայութեան համակարգուած իւրացումի ճանապարհով: Այստեղ արդէն որոշիր արուեստագէտի ներքին ազատութեան խնդիրն է, որ զերծ է արտաքին հանգամանքներից: «Առանց ազատութեան գեղարուեստն անկարելի է, որովհետեւ այն անընդհատ եւ անզիջում պայքար է ազատութեան եւ գեղեցիկի համար: Գեղարուեստի գոյութիւնը դադարում է ոչ թէ ամէն մի բռնակալական տիրապետութեան ներքոյ, այլ երբ հնագանդում է բուր անհրաժեշտութեանը»<sup>48</sup>:

Խրախունու համար ազատութեան՝ պատմական ենթախորքով բարոնումը ճշմարտութիւնները խօսքի գեղարուեստական անվրէպ սլացքով ցուցադրելու կարողութեան մէջ է:

Թումանեան-Խրախունի գրական աղերսները մեզ համար նիւթի ընտրութեան, պատկերների կառուցման ընդհանուր գծերից զատ բացւում են նաեւ գեղագիտական ըմբռնումների, բանաստեղծ-ընթերցող, բանաստեղծ-ընկերութիւն (Խրախունու ձեւակերպումով՝ «Ես եւ որիշներ») յարաբերութիւնների սահմանման ճանապարհով։ Այս կապերը երեւում են նրանց թէ՝ տեսաբանական որոնումների մէջ, թէ՝ քերթուածներում։

1918ին գրած «Իմ Երգը» բանաստեղծութեան միջոցով Թումանեանը պարզաբանում է արուեստագէտի եւ ընթերցողի առնչութեան իր համար նախընտրելի կերպը։ Հարցի էութիւնը փորձում է իւրովի մեկնել նաեւ Խրախունին՝ «Հանք» քերթուածում։ Նրա այս բանաստեղծութիւնը ուղիղ գծով նախ եւ առաջ կապւում է արեւմտահայ քնարերգակ բանաստեղծ Վահան Թէքեանի «Աստուծոյ» եւ «Ընթերցողին» ձօների հետ։ Սակայն եռակողմ քննութիւնը մեր աշխատանքում կարող է յանդեցնել վերլուծական ոչ-նպատակառուղղուած տարընթերցումների, ուստի մենք նախընտրում ենք փաստերի համադրումից այն կողմ չանցնել։

Թէ Մեծ Լոռեցին, թէ Խրախունին ծրագրային քերթուածներում փորձում են պարզել քերթողական մօտեցման իրենց առանձնայատկութիւնները։ Նիւթը բացելու եղանակով իրենց ստեղծագործական հարստութիւնը նրանք ցուցադրում են գրեթէ նոյնայնգ պատկերներով։

Գանձեր ունեն անտակ, անձէ ր,

Ես հարուստ եմ, ջան, ես հարուստ...<sup>40</sup>.

Եւ միեւնոյն ժամանակ՝

Ես հանք ունիմ անյատակ - ես գանձ ունիմ անսպառ...<sup>50</sup>։

Թումանեանը, իբրև շոայլօրէն աշխարհին բացուած բանաստեղծ, ամէն ինչ դնում է կեանքի իմաստնութեան նժարին։ Նրա ստեղծագործական հատնումով գանձերը չեն սպառւում։

Ինչքան էլ որ բաշխեմ ծըրի -

Սէրն անվերջ է, բարին անհատ<sup>51</sup>,

Նոյն «սրտաբացութիւնն» է գրսեւորում նաեւ պոլահայ բանաստեղծը։ Նա էլ իր գանձերը բաշխելու պատրաստ արուեստագէտն է, սակայն շոայլութեան դիմաց յաճախ պարպումի, վատնումի զգացողութիւնն է, որ ուղեկցում է նրան։ Փիլխառիքայրանաստեղծի «Հանքը» դժուար է պեղել, որովհետեւ խորքերին հասնելու ու հարստութիւնը չափակչուելու որոշ անհնարինութիւն մնում է։ Կայ նաեւ ընթերցող միջավայրի՝ պատկերներին հաղորդ գառնալու մտաւոր գարգացութեան խնդիրը։

Ոչ կը ցամքիմ պարպելով - ոչ կը հատնիմ վատնելով

Այնքան խոր եմ այնքան հարուստ որ երբեք

Ոչ սահմանիս ոչ հաշիս կը հասնիք...<sup>52</sup>:

Այստեղից բխում է մեր եզրակացութիւնը, որ ստեղծագործական աղերսների առումով զուգահեռադիր այս բանաստեղծութիւնները, ելման նոյնանման կէտեր ունենալով հանդերձ, գեղագիտական նպատակի, թիրախի տեսանկիւնից տարբեր են:

Կեանքի վերջին տարիներին թումանեանը դիմում էր բանաստեղծական աւելի փոքր ձեւի՝ քառեակներին, որոնք փիլիտոփայական խոր հանդերձով, գեղարուեստական խոտացումներով անտարբեր չեն թողնում պոլսահայ բանաստեղծին: Երկուսն էլ իրենց առաքելութեան ճանապարհին ընտրում են ինքնայրումի, ինքնահատնումի ճանապարհը.

.....  
Վառուել ու հոր եմ դառել,  
Հոր եմ դառել՝ լոյս տրւել,  
Լոյս տաղով եմ ըսպառուել...<sup>53</sup>:

Ու կը սպասեմ ես յոյսին որուն հորով հալումաշ  
Պիտի վառիմ պիտի հատնիմ լոյսէ երազ սիրելով...<sup>54</sup>:  
Կամ'

Յրտի, ցանուիլ, բազմանալ ու բարախել  
Այրի և այդպէս երակ երակ, շունչ առ շունչ  
Այրի այդպէս միշտ հատնելով հատնելով...<sup>55</sup>:

Բուռն գործունէութեանն ու նուիրումին յաջորդում է անցածը իմաստաւորելու պահը: Երկու բանաստեղծներն էլ մի ակնթարթ թէքէեանի բառերով՝ «Հաշուեյարդար»ի են նստում իրենց ետեւում թողածի հետ, փորձում հասկանալ՝ ի վերջոյ «ի՞նչ մնաց». դա ընդամենը կամ «անպտուղ, առանց արդիւնքի»<sup>56</sup> վատնում է եղել, կամ՝ մէկ-երկու «անբաւարար» լիշտակ.

Իսկ ի՞նչ մնաց - միմիայն  
արդար վաստակ  
յարգանք անկեղծ  
համբաւ անեղծ  
եւ քանի մը լուսաճաճանչ յիշտակ...<sup>57</sup>:

Երկու քերթողներն էլ բուռն են արձագանգում ընդհանուրի կեանքին, սակայն ստեղծագործող անհատի, արուեստագէտի հոգեկան ներքին շերտերին անդրադարձը բերում է անհատի եւ հասարակութեան միջեւ անջրապետի անխուսափելիութեան, փոխադարձ անըմբունողութեան գիտակցութեան: Այս առումով հետաքրքրական զուգահեռներ են պարզում «Շատերի Նման» եւ «Հարցում՝ Սոխակի թեւերուն» քերթուածները:

Բանաստեղծի ներաշխարհում կատարուող փոթորկումները թումանեանը ձեւակերպում է այսպէս.

Եւ դուք ի՞նչ գիտեք, թէ երգիշն ուրախ,  
Որ ծեզ համար միշտ երգեր է երգում,  
Քարասիրտ մարդկանց ծաղրանքից ծածկած  
Ի՞նչ ցաւեր ոնի իր սրտի խորքում<sup>58</sup>:

Խրախունին, իրբեւ առարկայապաշտ բանաստեղծութեան հետեւրդ, խանդավառուած չէ սոխակի եւ ըլքուլի աւանդութեան կրկնութիւններով, ինչն իրաւամբ համարում է ժամանակավրէպ: Աւելին, պարզ այլաբանութիւնը այն աստիճան է խճողուած, որ սոխակ-բանաստեղծի երգը միայն առերեւոյթ է «անուշ դալլայլ» թւում: Խորքում կարելի է որսալ ափսոսանքի, ցաւի, զղչումի արտայայտութիւններ.

Այն ինչ որ մենք կը լսենք  
որպէս նուազ գեղազմայլ  
Երգ չէ բնաւ ափսոսանքի, ցաւի հառաջ է տրտում  
Եւ ոչ դալլայլ, այլ հեծեծանք զղչումի  
Որ կը բխի սրտի խորէն  
արտասուրով անուշցած<sup>59</sup>...

«Ներսի» ու «դրսի» հակադրութիւնն այնքան է խորանում, որ «ի՞նչ իմանաս Ըստեղծողի Գաղտնիքները Անմեկին» քառեակում եւ Խրախունու «Յետոյ» քերթուածում աշխարհաքննութիւնը բանաստեղծական տարածութեան մէջ ակամայ մեկուսի վիճակ է ստեղծում, ինչն ստիպում է նրանց մերձենալու Աստուած-մարդ յարաբերութեանը.

Ի՞նչ իմանաս Ըստեղծողի զադանիքները անմեկին.-  
Ընկեր տրւաւ, իրար կապեց էս աշխարհում ամենքին.  
Բանաստեղծին բողեց մենակ, մէն ու մենակ իրեն պէս,  
Որ իրեն պէս մըտիկ անի ամէն մէկին ու կեանքին<sup>60</sup>:

Զեոր երկարել աշխարհին  
Եղբայրանալ օտարին հետ, եկուորին հետ, անցորդին  
Դուռը բանալ մօտառին հեռաւորին -  
ինչպէս սեղանն ու հոգին...

Յետոյ դառնալ - ամէնուն  
Եւ աղօթել  
Սուանձին<sup>61</sup>:

\*

Կեանքի վերջին տարիներին Թումանեանը իր տեսաբանական որոնումներում զգում էր, որ աւելի ու աւելի է հակւում դէպի խոհականութիւնը: Ցոյզի ու բանականութեան յարաբերակցութեան մէջ նժարը թեքւում է դէպի միտքը: «Ես էլ հետզինուէ փիլիսոփայութիւնն եմ սիրում եւ բանաստեղծութեան մէջ էլ այն, որ ոչ արտասուր ունի, ոչ յուզմունք, այլ մի վեհափառ խաղաղութիւն, մի ոլիմպիական, վսեմ, ար-

համարիուս բոհշը դեպի լաւագոյն աշխարհները եւ աւելի ջինջ ու մարուր նքնողութները»<sup>62</sup>:

Այս գեղագիտական դրոյթն է, որ դեռեւ 1959ին՝ ստեղծագործական արշալոյսին, խորացնում է Խրախունին՝ ծաւալուելով բանաստեղծութեան ընկալութեան ընթացքների չուրջ, որոնք այսօր հանգանակի հնչողութիւն ունեն: Ապաւինելով ընթերցողի ընկալման փորձառութեանը՝ նա գծում է բանաստեղծութեան նոր սահման. «Այլեւս զգացուներու պիտի շխոսէր զրականութիւնը, այլ՝ իմացականութեան: ...Այլեւս թերթուածին կամ արծակ կտորին ամրողական իմաստն էր որ առաջնակարգ կարեւորութիւն պիտի ստանար, եւ ոչ թէ զրութիւնը կազմող տողերուն կամ նախադասութիւններուն առանձին գեղեցկութիւնը: «Ախ»երու, «ո՞հ»երու, «ափսոս»ներու շրջանը անցած էր այլեւս»<sup>63</sup>:

Այսպիսով, Խրախունու ստեղծագործական ներքին շերտերի քննութիւնը մեզ բերում է այն համոզման, որ, որքան էլ եւրոպական բանաստեղծութեան ճանապարհը գայթակղէր նրան իմացական միջուկով, տարիների ընթացքին նա չի լքել հայ երգի «մայր գիծը», այլ շարունակել է այնտեղից, որտեղից «խորհուրդ են տուել» Թումանեանը եւ միւս «նախորդները»՝ Թէքէեանը, Վարուժանը, Զարենցը, Պ. Սեւակը:

Կապուած լինելով հայ բանաստեղծական աւանդոյթներին՝ Խրախունին աւելի հեռուն գնաց. կարողացաւ ստեղծել բանաստեղծական դպրոց, մանաւանդ որ, ինչպէս դիպուկ նկատում է Սեւակը, «բոլորիս չէ, որ տրուած է զրական դպրոց բաց անելու, զրական հոսանք առաջ բերելու բախտը: Ոչ ոք չի կարող իմանալ, թէ այդ բախտը՝ հերիստական սինամ հարթի պէս ո՞ւմ ուսին կը բատի»<sup>64</sup>, եւ դարձաւ նրա առաջնորդը՝ իրագործելով երիտասարդական շրջանի իր իսկ պատգամ-յորդորը. «Օի բաեր անցը մը բանալ ու յառաջանալ. երբեմն պէտք է կանգ առնել, տեսնել մեկնակէտը, նշան դնել ու գամել ցուցատախտակ մը, որ ետեւ եկողներուն ըստ լեռելեայն. «Այս ալ ճամրայ մըն է, ասկէ ալ կրնար անցնի...»<sup>65</sup>:

Կարելի է ասել, որ իր անցած ուղին նա արժեւորել է նաեւ արեւելահայ երգի յետագծով՝ ճիշդ Թումանեանի, Զարենցի եւ Սեւակի գեղագիտական ճանաչողութեամբ:

## ՄԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

<sup>1</sup> Ազթօ Ճիւմպիւշեան, Նշամարներ Միւս Երեսէն, Խսթանպուլ, «Մուրատ Օֆսէթ» Տպ., 1991, էջ 75-76:

<sup>2</sup> Զարեկ Խրախունի, Հարցարան, Խսթանպուլ, «Մուրատ Օֆսէթ» Տպ., 2007, էջ 31:

<sup>3</sup> Ցիշենք, օրինակ, Վահան Տէրեանի եւ Եղիշէ Զարենցի բայտնի վերապահումները պոլսահայ զրականութեան առիթով. Առաջինը Թումանեանի մի «Փարւանա»ն համայն չէր փոխել «պոլսահայ բոլոր յանկարծակի հերանոսացած պուտների ար-

- տաղորոթեանց հետ» (Վահան Տէրեան, Երկերի ժողովածու և Հատորով, Հատոր Երեւան, «Հայաստան» Հրատ., 1975, էջ 92): Խակ երկրորդը նետերն ուղղում էր Վարուժանի դէմ՝ նրան անուանելով «նայիրիան վարժապիտազգիստ բուրմ» (Եղիշէ Զարենց, Երկերի ժողովածու, Հար. 6, Երեւան, ԳԱԱ Հրատ., 1967, էջ 156):
- Վերջին շրջանում արեւմտահայ արքէներին թերահաւատութեամբ էր մօտենում արձակագիր Հրանդ Մաթէոսիսեանը, որը երկու մշակոյթների երկխառութեան հսարաւորութիւնը կապում էր լեզուական միաձուլման հետ՝ ծանրութեան ուժը թեքելով արեւելահայերէնի կողմը (այս մասին մանրամասն տե՛ս՝ Սուրէն Դանիէլիսի «Ներածութիւն», Միջուկի Տրոհումը. Սփրուռքահայ Գրականութեան Պատմութիւն, Գիրք Ա., Երեւան, «Զանգակ-97» Հրատ., 2011, էջ 23-25):
- <sup>4</sup> Յովհաննէս Թումանեան, Երկերի Լիակատար ժողովածու Տասը Հատորով, Հար. 7 (Քենազատութիւններ Եւ Հրապարակագրութիւններ (1913-1922), Երեւան, ՀՀ ԳԱԱ Հրատ., 1995, էջ 396).
- <sup>5</sup> Թումանեան, Երկերի Լիակատար ժողովածու, Հար. 7, էջ 108.
- <sup>6</sup> Թորոս Թորանեան, Խօթանպուրահայերը Կը Կանչէն, Խօթանպուլ, «Արաս», 1997, էջ 13:
- <sup>7</sup> Թումանեան, Երկերի Լիակատար ժողովածու Տասը Հատորով, Հար. 1 (Բանաստեղծութիւններ), Երեւան, ՀՀ ԳԱԱ Հրատ., 1988, էջ 302:
- <sup>8</sup> Սայխաթ-Նովիա (Հայքիչ Եւ Անդյերէն), պատրաստեց Արմէն Տօնոյեան, Հրատարակութիւն Նաւասարդի, թիւ 35, Կլինտէլլ, 1996, էջ 152:
- <sup>9</sup> Զարեհ Խրախունի, Ծա Եւ Ռւրիշներ, Խօթանպուլ, «Հերմոն» Տպ., 1964, էջ 54:
- <sup>10</sup> Պարոց Սեւակ, Երկերի ժողովածու Եւ Հատորով, Հատոր Հինգերորդ (Գրականագիտութիւն, Քննադատութիւն), Հայաստան Հրատ., Երեւան, 1974, էջ 389:
- <sup>11</sup> Թումանեան, Երկերի Լիակատար ժողովածու, Հար. 1, էջ 28:
- <sup>12</sup> Նոյն, էջ 281:
- <sup>13</sup> Հրանդ Թամրագեան, Բանաստեղծը Եւ Ժակառագիրը, Երեւան, «Առվետական Գրող» Հրատ., 1978, էջ 166:
- <sup>14</sup> Խրախունի, Ծա Եւ ...., էջ 55:
- <sup>15</sup> Աւետիս Ալիքսանեան, Անունը Մասիս Դրինը, Փարիզ, Տպ. Արաք, 1964, էջ 100:
- <sup>16</sup> Սուրէն Աղաբարեան, XX Դարի Հայ Գրականութեան Զուգահեռականներում, Գիրք II, Երեւան, «Առվետական Գրող» Հրատ., 1984, էջ 25:
- <sup>17</sup> Տէրեան, Երկերի ժողովածու և Հատորով, Հատոր Երրորդ, էջ 65:
- <sup>18</sup> Յովհաննէս Թումանեան, Երկերի Լիակատար ժողովածու Տասը Հատորով, Հար. 9 (Նամակներ, 1885-1904), Երեւան, ՀՀ ԳԱԱ Հրատ., 1997, էջ 290:
- <sup>19</sup> Արթօ Ճիւմպիւչեան, Անդրադարձութիւն, Խօթանպուլ, «Առլրատ Օֆսէթ» Տպ., 2004, էջ 184:
- <sup>20</sup> Ստեփան Թոփչեան, Անհունի Անդրադարձը, Երեւան, «Առվետական Գրող» Հրատ., 1987, էջ 288:
- <sup>21</sup> Թումանեան, Երկերի Լիակատար ժողովածու, Հար. 1, էջ 23:
- <sup>22</sup> Զարեհ Խրախունի, Թար Կաթիւներ, Խօթանպուլ, «Անրու» Տպ., 1964, էջ 17:
- <sup>23</sup> Էղուարդ Ջրաչեան, Թումանեանի Պոէմները, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատ., 1985, էջ 110:
- <sup>24</sup> Սեւակ Արզումանեան, Բանաստեղծութեան Ազգային Հողը, Երեւան, «ԱՌԵՐԵՍՈՒՄ - Անի» Հրատ., 1998, էջ 258:
- <sup>25</sup> Հիլդա Գալֆայեան-Փանոսեան, Պոյահայ Նոր Բանաստեղծութիւնը, Անթիլիաս, Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1998, էջ 174:
- <sup>26</sup> Թումանեան, Երկերի Լիակատար ժողովածու, Հար. 1, էջ 207:
- <sup>27</sup> Խրախունի, Քար..., էջ 19:
- <sup>28</sup> Թումանեան, Երկերի Լիակատար ժողովածու, Հար. 9, էջ 428:

- <sup>29</sup> Անտեսելու է, որ այդպէս նոյն 90ականներին վարւում է նաև Լեռոն Շանթը. նրան՝ «քմահաճ ծերունինները երեւում են իրեւ «...ալիսեր / բարաններ... խորշոնած» որ «խորհուս են աշխարհի բան» (Լեռոն Շանթի Երկերը (Գեղարուեստական Գրութիւններ (1891-1894), Ա. Հոր., Պէտութ, Համազգայինի «Վահէ Սէթեան» Տպ., 2008, էջ 349):
- <sup>30</sup> «Լեռն ի Վեր» բանաստեղծութիւնը թէ՛ գաղափարական մօտեցումներով, թէ՛ պատկերային կառոյցով առաջին հերթին կապւում է Վարուժանի «Հայրենի Լեռներ» քերթուածին (Դանիէլ Վարուժան, Երկերի Լիակատար Ժողովածու Երեք Հատորով, Հոր. 1, Երեւան, ԳԱ Հրատ., 1986, էջ 166): Սակայն դա առանձին քննութեան նիւթ է, եւ մենք նախընտրում ենք փաստի արձանագրումից այն կողմ չանցնել:
- <sup>31</sup> Խրախունի, Քար..., էջ 18:
- <sup>32</sup> Սուրեն Դանիէլեան, Բանաստեղծութեան Ազատագրումը. Զարեհ Խրախունի, Սր. էջմիածին, 1999, էջ 59:
- <sup>33</sup> Թումաննեանը 1915ի ամռանը գտնուում էր էջմիածնում եւ զբաղւում էր Մուշից, Ալաշկերտից, Վասպուրականից եկած հայ գաղթականների խնամակալութեամբ:
- <sup>34</sup> Թումաննեան, Երկերի Լիակատար Ժողովածու, Հոր. 7, էջ 323-324:
- <sup>35</sup> Ստեփան Զօրեան, Երկերի Ժողովածու 12 Հատորով, Հոր. 12, Երեւան, «Էյորհըրդային Գրող», 1990, էջ 111:
- <sup>36</sup> Թումաննեան, Երկերի Լիակատար Ժողովածու, Հոր. 1, էջ 279:
- <sup>37</sup> Ճիւմպիւշեան, Անդրադարձումներ, էջ 184:
- <sup>38</sup> Զարեհ Խրախունի, Տօնակարգ, Տպ. Յակոբ Արէլեան, Խսթանպուլ, 1973, էջ 30:
- <sup>39</sup> Նոյն:
- <sup>40</sup> Նոյն:
- <sup>41</sup> Այս առիթով աւելորդ չենք համարում նշել, որ աքլորի եւ այգարացի խորհուրդները մեզ անմիջապէս տանում են Սեւակի «Ասպետօքէն Անկրկնելին» յօդուածին, որտեղ Սիամանթոյին ուղղուած գնահատական խօսքը ուշագրաւ զուգադրութիւն է պարզում պղսահայ բանաստեղծի տողի հետ. «Արադաղ բառը չի կարող վիրատրանը համարուել նրա յիշատակին. նա, ինչպէս ինձ է բուն, իր մասին ինքը կը գործածեր այդ բառը, եթէ նրան շխանգարեր իր համեստութիւնը, որ նոյնքան անսահման եր, որքան իր երեւակայութիւնը: Եւ նա ծնուել էր «քարի լոյս» ասելու իր ժողովրդին և աշխարհին, բայց չտեսաւ ոչ բարին, ոչ էլ լոյսը» (Պարոյք Սեւակ, Երկերի Ժողովածու 8 Հատորով, Հոր. Հինգերորդ, էջ 204):
- <sup>42</sup> Թումաննեան, Երկերի Լիակատար Ժողովածու, Հոր. 1, էջ 205:
- <sup>43</sup> Նոյն:
- <sup>44</sup> Խրախունի, Տօնակարգ, էջ 30:
- <sup>45</sup> Յովհաննէս Թումաննեան, Երկերի Լիակատար Ժողովածու Տար Հատորով, Հոր. 8 (Թմբադատութիւն եւ Հրապարակախօսութիւն), Երեւան, ՀՀ ԳԱԱ Հրատ., 1994, էջ 195:
- <sup>46</sup> Թումաննեան, Երկերի Լիակատար Ժողովածու, Հոր. 9, էջ 233:
- <sup>47</sup> Նոյն, էջ 237-238:
- <sup>48</sup> Ստեփան Թոփէեան, Անհունի Անդրադարձը, էջ 247:
- <sup>49</sup> Թումաննեան, Երկերի Լիակատար Ժողովածու, Հոր. 1, էջ 298:
- <sup>50</sup> Խրախունի, Քար..., էջ 6:
- <sup>51</sup> Թումաննեան, Երկերի Լիակատար Ժողովածու, Հոր. 1, էջ 298:
- <sup>52</sup> Խրախունի, Քար..., էջ 6:
- <sup>53</sup> Յովհաննէս Թումաննեան, Երկերի Լիակատար Ժողովածու Տար Հատորով, Հոր. 2 (Թառեակներ, Բալլագներ, Թարգմանութիւններ), Երեւան, ԳԱԱ Հրատ., 1990, էջ 20:
- <sup>54</sup> Խրախունի, Ես Եւ ...., էջ 21:
- <sup>55</sup> Նոյն, էջ 72:

- 
- <sup>56</sup> Թումանեան, Երկերի Լիակատար ժողովածու, Հար. 2, էջ 57.
- <sup>57</sup> Զարեհ Խրախունի, Մհարոպատու, Խսթանպուլ, «Մուրատ Օֆսէթ» Տպ., 2005, էջ 95.
- <sup>58</sup> Թումանեան, Երկերի Լիակատար ժողովածու, Հար. 1, էջ 50.
- <sup>59</sup> Նոյն, էջ 13.
- <sup>60</sup> Թումանեան, Երկերի Լիակատար ժողովածու, Հար. 2, էջ 43.
- <sup>61</sup> Զարեհ Խրախունի, Աւզիներ, Խսթանպուլ, «Մուրատ Օֆսէթ» Տպ., 1987, էջ 88.
- <sup>62</sup> Թումանեան, Երկերի Լիակատար ժողովածու, Հար. 9, էջ 289.
- <sup>63</sup> Ճիւմպիւշեան, Անդրադարձումներ, էջ 185.
- <sup>64</sup> Սեւակ, Երկերի ժողովածու Յ Հատորով, Հատոր Հինգերորդ, էջ 199.
- <sup>65</sup> Ճիւմպիւշեան, Նշմարներ Միւս Երեսէն, էջ 77.

HOVHANNES TUMANIAN AND ZAREH KHRAKHUNI:  
THE SAME "MOTHER LINE" TRACK

(Summary)

KNARIK ABRAHAMIAN  
k.abrahamian@spyurk-center.am

There are some difficulties in comprehending the unity of Western and Eastern Armenian literature. Often these two bodies of literature were opposed. Some critics argued that Western Armenian had developed outside the homeland or had followed the values of European literature. The contemporary Istanbul-resident Western Armenian poet Zareh Khrakhuni counter-argues that the poetry created in post-WWII Istanbul comes not only from classical Western Armenian poetry and especially from Vahan Tekeyan, Daniel Varujan, and Mateos Zarifian, but is also connected to Eastern Armenian literary traditions, especially to Hovhannes Tumanian, Yeghishe Charents, Vahan Terian, and Paruyr Sevak. Khrakhuni has been defending this position for over half a century.

The author of this article highlights the poetic connections that existed between Toumanian and Khrakhuni. And by doing so she argues that both the two Armenian bodies of literature are located in the same space.

